ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 423-2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան 02 դեկտեմբերի 2018թ.

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Կիրակոսյանի (այսուհետ՝ Շնորհատու), որը գործում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամն, ի դեմս գործադիր տնօրեն Գ.Գևորգյանի (այսուհետ՝ Շնորհառու), որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ «Գյուղական խորհրդատվական ծառայություններ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Շնորհառուին հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ «Գյուղական խորհրդատվական ծառայություններ» (04.02.01.06) ծրագրով 410456700 (չորս հարյուր տասը միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, իսկ Շնորհառուն Ծրագիրը պարտավորվում է իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված Շնորհառուի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N4 հավելվածով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Շնորհատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Շնորհառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Ծրագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, Շնորհառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Շնորհառուն ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Շնորհառուն երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները,

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2 Շնորհառուն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Շնորհատուի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Շնորհատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Շնորհատուն պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Շնորհառուին.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Շնորհառուն պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Շնորհատուի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Շնորհատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով Շնորհատուին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն.

2.4.4.1. ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսյակային հաշվետվությունը (հավելված N1)՝ ներկայացնել հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ ամսական հաշվետվություն՝ մինչև հաջորդող ամսվա 5-ը՝ համաձայն սույն պայմանագրի N3 հավելվածի, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Շնորհատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6 Շնորհատուի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Շնորհառուն պարտավորվում է անվճար՝ Շնորհատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Շնորհատուն Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Շնորհատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շնորհառուին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Շնորհատուն ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շնորհառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Ծրագրի կատարման համար Շնորհառուին, որպես դրամաշնորհ, վճարել 410456700 (չորս հարյուր տասը միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N2 հավելվածին համապատասխան: Ծրագրի գնից 45697400 (քառասունհինգ միլիոն վեց հարյուր իննսունյոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամը Շնորհատուն փոխանցում է Շնորհառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

4.2. Հաշվետու ամսվա փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ համաձայն N3 հավելվածի, Շնորհառուի կողմից ներկայացված հաշվետվությունն ընդունելուց հետո Շնորհատուն հաջորդ ամսվա վճարման ենթակա գումարը, որպես կանխավճար, վճարում է Շնորհառուին՝ հաշվետվությունն ընդունելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Եռամսյակի ավարտից հետո Շնորհառուին վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին N1 հավելվածով ներկայացված ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշներին համապատասխան՝ համաձայն N2 հավելվածի:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Շնորհառուն պարտավորվում է Շնորհատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Շնորհառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Շնորհատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Շնորհառուին վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կազմված է 2 օրինակից, 10 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՇՆՈՐՀԱՏՈՒ	ՇՆՈՐՀԱՌՈՒ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ
ք. Երևան, Կառավարական շենք N3	ք. Երևան, Կառավարական շենք N3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011008431	Հ/Հ 22000019025100
ՀՎՀՀ 02508046	ՀՎՀՀ 02659417
Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ	Գ.ԳԵՎՈՐԳՅԱՆ
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
2018 թվականի 02 դեկտեմբերի կնքված
N 928-Ա պայմանագրի

Ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույց

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը
Ծրագրի անվանումը
Նկարագրություն

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Գյուղական խորհրդատվական ծառայություններ
Ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան խորհրդատվության տրամադրում գյուղացիական տնտեսություններին

հհ	*Միջոցառումների անվանումը*	Նախատեսվում է իրականացնել 2018 թվականին								
		Ըստ եռամսյակների (աճողական)								
		I եռամսյակ		I կիսամյակ		9 ամիս		տարի		Ծանոթություն
		պլանային քանակը	փաստացի քանակը	պլանային քանակը	փաստացի քանակը	պլանային քանակը	փաստացի քանակը	պլանային քանակը	փաստացի քանակը	
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	
1	**Խմբային դասընթաց /հատ/**	15		25		35		50		
2	**Տեղեկատվական նյութեր (այդ թվում՝ տեսանյութեր և հեռուստահաղորդումներ) /հատ/**	12		20		28		40		
3	**Ծրագրային դասընթացներ /հատ/**	35		60		85		120		
4	**Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տնտեսությունների կողմից ձեռք բերված տեխնիկայի մոնիթորինգ /հատ/**	10		30		40		60		
5	**Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում, ծրագրային դասընթացներին մասնակցած և վարկ ստացած տնտեսությունների մոնիթորինգ /հատ/**	60		120		180		240		
6	**Խմբային դասընթացի առնվազն 3 գնահատած /1-5 բալային համակարգում/ մասնակիցների տեսակարար կշիռը**							80		

	խմբային դասընթացի մասնակիցների ընդհանուր թվի մեջ /տոկոս/									
7	Ծրագրային դասընթացների առնվազն 3 գնահատած /1-5 բալային համակարգում/ մասնակիցների տեսակարար կշիռը ծրագրային դասընթացների մասնակիցների ընդհանուր թվի մեջ /տոկոս/							80		
8	Մեկ խմբային դասընթացի տևողությունը /առնվազն օր//նվազագույնը ժամ/							1/3		
9	Մեկ ծրագրային դասընթացի տևողությունը /առնվազն օր//նվազագույնը ժամ							1/3		

ՇՆՈՐՀԱՏՈՒ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք.Երևան, Կառավարական շենք N3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011008431
ՀՎՀՀ 02508046
------------------ Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՇՆՈՐՀԱՌՈՒ
Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ
ք.Երևան, Կառավարական շենք N3
<< Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ >> ՓԲԸ
Հ/Հ 220009190251000
ՀՎՀՀ 02659417
------------------ Գ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

2018թվականի 02 փետրվարի կնքված
N ԳՁՀ-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը **<u>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</u>**

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

3. Հիմնարկին սպասարկող գանձապետական բաժանմունքի անվանումը **<u>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն</u>**

4. Գանձապետական բյուջետային հաշվի համար **<u>900011008431</u>**

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախ
04	02	01	06	104007

Ծրագրերի անվանումը **<u>Գյուղական խորհրդատվական ծառայություններ</u>**

/հազար դրամ/

Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ-ի 2018թ պետական բյուջեից, ընդ որում աճողական											
		1-ին եռամսյակ			1-ին կիսամյակ			9 ամիս			տարի		
		հունվար	Փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	0,0	45,697.4	68,546.3	102,750.9	136,655.7	171,160.5	205,365.3	239,570.1	273,774.7	319,335.5	364,896.1	410,456.7
Ընդամենը		0,0	**45,697.4**	**68,546.3**	**102,750.9**	**136,655.7**	**171,160.5**	**205,365.3**	**239,570.1**	**273,774.7**	**319,335.5**	**364,896.1**	**410,456.7**

ՇՆՈՐՀԱՏՈՒ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք.Երևան, Կառավարական շենք N3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011008431
ՀՎՀՀ 02508046
Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՇՆՈՐՀԱՌՈՒ
Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ
ք.Երևան, Կառավարական շենք N3
<< [illegible] Բանկ >> ՓԲԸ
Հ/Հ 220009190251000
ՀՎՀՀ 02659417
[illegible]ՈՐԳՅԱՆ

Հավելված 3
2018թվականի 02 փետրվարի-ին կնքված
N 728-2 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N __
ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՃԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ
.....2018թ. - .....2018թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը՝ **Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ**
2. Փոստային հասցեն՝ .....
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
5. Ճախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ 1
(ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2)

6. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման

Բաժին N	04
Խումբ N	02
Դաս N	01

7. Ծրագրի կոդը 06
8. Ծրագրի անվանումը Գյուղական խորհրդատվական ծառայություններ
9. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման 104007
10. Չափի միավորը՝ ***հազար դրամ***

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի անվանումները	NN	Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ	Փոփոխություններ տարեկան նախահաշվում: ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում)	ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում)	Վերադասի կողմից	Տարեկան ճշտված նախահաշիվ	Ֆինանսավորում	Դրամաշնորհներ	Փաստացի ծախս	Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր): Ընդամենը	Որոնցից՝ 30 օրից անց պարտքեր	Դրամարկղի մնացորդ
Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը=Դ+Ե+Զ+Է	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ
1100000	***Ընթացիկ ծախսեր,***	x	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
	այդ թվում												
1150000	***5.Դրամաշնորհներ***	x	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
	Այլ ընթացիկ դրամաշնորհներ	**4639**											
1000000	***Ընդամենը ծախսեր***	x	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0

« ..... » « » 2018 թ.

Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի տնօրեն՝ .....
(անունը, ազգանունը)

Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ՝ .....
(անունը, ազգանունը)

Հաշվապահ՝ .....
(անունը, ազգանունը)

Գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժնի պետ՝ .....
(անունը, ազգանունը)

Կ.Տ.

Հավելված 4
2018 թվականի 02 փետրվարի-կնքված
N 929-2 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	Խմբային դասընթացներ	Խմբային խորհրդատվություններ և դասընթացներ տարբեր համայնքներում, ինչպես լսարանային այնպես էլ գործնական և դաշտային	Խմբային դասընթացների ամբողջական իրականացումը բաղկացած է մի քանի հաջորդական փուլերից՝ ✓ թեմայի և դասընթացավարի ընտրություն, ✓ մասնակիցների ընտրություն և խմբերի կազմում, ✓ խմբային դասընթացի ձևաչափի ընտրություն և դասընթացի մատուցում	ԳՏ վարողների կարողությունների հզորացում, տնտեսությունների վարման արդյունավետության բարձրացում, գյուղատնտեսության նորարարական տեխնոլոգիաների իրազեկվացության բարձրացում և կիրառություն	մինչև 28.12.2018թ	82,091,340
2	Տեղեկատվական նյութեր (այդ թվում տեսանյութեր և հեռուստահաղորդումներ)	Գյուղատնտեսությանը ինչպես նաև գյուղատնտեսության խորհրդատվական համակարգին վերաբերող տեսանյութերի պատրաստում	Թեմայի ընտրություն, կազմակերպում, նկարահանումներ	Մասնագիտական գիտելիքների և տեղեկացվածության բարձրացում	մինչև 28.12.2018թ	61,568,505
3	Ծրագրային դասընթացներ	Դասընթացներ պետության կողմից սուբսիդավորված վարկերի ստացման, բիզնես պլանների կազմման, արդյունավետ գյուղատնտեսության վարման, պետության կողմից իրականացվող	Ծրագրային դասընթացների ամբողջական իրականացումը բաղկացած է մի քանի հաջորդական փուլերից՝	ԳՏ վարողների մասնագիտական պատրաստվածության բարձրացում և աջակցություն՝ տեղեկատվություն, լրացուցիչ գիտելիք ու հմտություններ	մինչև 28.12.2018թ	184,705,515

		ծրագրերին մասնակցելու վերաբերյալ:	✓ մասնակիցների ընտրություն, ✓ դասընթացի մատուցում, ✓ հավաստագրերում	փոխանցելու և կարողություններ զարգացնելու միջոցով:		
4	Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տնտեսությունների կողմից ձեռք բերված տեխնիկայի մոնիտորինգ	Ծրագրի շրջանակներում ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի մոնիտորինգի իրականացում	Մոնիտորինգի իրականացումը ✓ ձեռք բերված տեխնիկայի տեղակայված վայրեր այցելություն ✓ մշակված ձևաթղթով առկայության և վիճակի գնահատում ✓ հավաքագրված տվյալների համախմբում և ներկայացում	Ձեռք բերված տեխնիկայի առկայության բացահայտում:	մինչև 28.12.2018թ	20,522,835
5	Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում, ծրագրային դասընթացներին մասնակցած և վարկ ստացած տնտեսությունների մոնիտորինգ	Ծրագրի շրջանակներում վարկ ստացած ֆիզիկական և իրավաբանական անձանց մոտ վարկերի նպատակային ծախսումների մոնիտորինգ	Մոնիտորինգի իրականացումը ✓ մեթոդաբանության և հարցաթերթերի մշակում ✓ ընտրաքի կազմում ✓ տվյալների հավաքագրում ✓ որակի ստուգում ✓ վերլուծություն	Վարկերի ծախսման ուղղությունների բացահայտում: Ըստ մարզերի և ըստ ուղղությունների ներդումների վերլուծությունների իրականացում:	մինչև 28.12.2018թ	61,568,505
Ընդամենը						**410,456,700**

ՇՆՈՐՀԱՏՈՒ
<< գյուղատնտեսության նախարարություն
ք.Երևան, Կառավարական շենք N3
<< ֆինանսների նախարարության գանձապետական գործառնական վարչություն
<< 900010084 31
<< 02508046
Ա.ԱՎԻԵՍՅԱՆ

ՇՆՈՐՀԱՌՈՒ
Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամն
ք.Երևան, Կառավարական շենք N3
<< Ամերիաբանկ Ագրիկոլ Բանկ >> ՓԲԸ
<< 220009190251000
<< 02659417
Գ.ԳԵՎՈՐԳՅԱՆ